Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

12-6ХХ
Ф-ա/915ա
9(47.925)
Մ-64
31 AUG 2007
05 SEP 2011

ՀԲԵՏ. ՅՈՎՀԱՆՆԵՍ ԵՐԵՄԵՆՑ

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ

ԿԱՋՄԵՑ
Ե. Թ.

1 պատկերով

Հ.Ս.Խ.Հ. Հանրային Գրադարան
Հայկական ՍՍՀ
7/XI-1922
имени А. Мясникяна
ԱՆՎԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ
1003/3103
9603

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ,
Աբրազամիոյ-Տպարան Ա. Մ. Մալխասեանցի
1901

28 06. 2013

Дозволено цензурою, 27 Октября 1901 года. Гор. Тифлисъ.

31103 +

Մեսրոպ Մաշտոց

Բագուի Հայոց
Հոլիփսիմեան Դպրոց
Եկեղ.-ծխակ. (որբանոց)

„Վերազանցեալ բան զամենայն, որ զայնու ժամանակաւ էին առաքիչքը.“

Մովս. Խորենացի:

I

Եթէ ուզում էք մի որևէ երկրի քաղաքակրթութեան մասին գաղափար կազմել, ասում է յայտնի գրականագէտ Բրանդէս*, թերթեցէք նրա գրականութիւնը. եթէ ուզում էք իմանալ մի որևէ ժողովրդի մտաւոր ու նիւթական պահանջները, հետևեցէք նրա մամուլին...

Եւ շատ ճիշտ է այդ կարծիքը. իւրաքանչիւր երկրի, իւրաքանչիւր պետութեան քաղաքակրթութեան աստիճանին համապատասխանում է նրա գրականութեան զարգացման աստիճանը:

Վերցնենք, օրինակ, եւրոպական ազգերին և

*) G. Brandes: „Moderne Geister“

այն ժամանակ կտեսնենք, որ գրանցից իւրաքանչիւրի գրականութիւնը թէ որակի և թէ քանակի կողմից համապատասխանում է տեղական ժողովրդի կուլտուրական բարձրութեանը։

Թեոթենք հայկական հին գրականութիւնը և այն ժամանակ կտեսնենք, որ նրա մէջ էլ, ինչպէս հայելու մէջ, անդրադարձել է հայի ամբողջ անցեալը, նրա ցաւերն ու կարիքները։ Դառն ու աննախանձելի է եղել այդ անցեալը, աղքատիկ է եղել և նրա գրականութիւնը։

Ճիշտ է, մենք ունեցել ենք բաւական շնորհալի կրօնական գրուածքներ, ճիշտ է դրանցից մի քանիսը մինչև օրս էլ մեծ արժէք ունին, բայց երբէք չի կարելի միայն դրանով մեր գրականութիւնը ճոխ համարել։ Նա չունի այնպիսի տաղանդաւոր գրուածքներ, ինչպէս, օրինակ, հարեւան յունական և լատինական գրականութիւնը։ Նա չունի այնպիսի երկեր, որոնք զուտ մտաւոր ու կուլտուրական առաջադիմութեան արդիւնք համարուէին։

Եւ ուրիշ կերպ չէր էլ կարող լինել։ Հայ ժողովուրդը հէնց սկզբից մի այնպիսի փոթորկալի վիճակ է ունեցել, այնպիսի հալածանքների է ենթարկուել, որ երբէք չէր կարող իր մտաւոր կեանքին ու գրականութեանը զարկ տալ և կուլտուրապէս առաջադիմել։

Հայաստանի աշխարհագրական դիրքը շատ անբնաստ է եղել։ Հարեւան ազգերի անդադար յարձակումները և նախարարների երկպառակութիւնը հային գրել էին մի տեսակ պատերազմական ու

պաշտպանողական գրութեան մէջ, այնպէս որ նա հազիւ կարողանում էր իր գոյութիւնը պահպանել։ Պարզ է, որ այդպիսի ձախորդ պայմաններում մտաւոր կեանքն ու գրականութիւնը ցանկալի չափով զարգանալ չէին կարող։

Բացի դրանից կար մի ուրիշ արգելք էլ՝ հայերը սեփական տառեր չունէին։ Հին ժամանակներում նրանք գործ էին ածում մի տեսակ պայմանական-հիերոգլիֆական նշաններ, որոնց մի քանի նմուշները մնացել են մինչև մեր օրերը։ Բայց այդ նշաններով միտք արտայայտելը չափազանց դժուար էր և շատ քչերին մատչելի, ուստի մտածեցին մի աւելի հեշտ միջոց գտնել։ Այդպիսով գործածութեան մէջ մտան պարսկական, յունական և ասորական տառերը։ Սակայն այդ տառերով էլ անհնարին էր հայկական լեզուի նրբութիւնը պահպանել և նրա բոլոր հնչիւններն արտայայտել։

Ամենքն էլ զգում էին սեփական տառեր ունենալու մեծ կարիքը. ամենքն էլ հասկանում էին այդ բանի օգտակարութիւնը... Հարկաւոր էր միայն մի հանճարեղ ձեռք, որ անյետաձգելի կարիքին բաւարարութիւն տար, հարկաւոր էր մի եռանդուն մշակ, որ հայի մտաւոր անդաստանը մշակելու գործիքը հնարէր։ Ահա այդ հանճարեղ ձեռքը, այդ եռանդուն մշակը եղաւ Մեսրոպ Մաշտոց։*

*Մեսրոպ անունը առաջ է եկել պարսկական միւշրեվ բառից, որ նշանակում է դպիր կամ քարտուղար. իսկ Մաշտոց՝ յունական բառից է առաջացել և նշանակում է բարձրութիւն — երբեմն եկեղեցական տիտղոս։

II

Տարօն (Մուշ) գաւառի Հացիկ գիւղում ծնուեց (360 թ.) այն մարդը, որին վիճակուած էր Հայոց աշխարհի բարերարը լինելու, նրա համար գիտութեան ու քաղաքակրթութեան ճանապարհ բանալու։ Նրա հայրը—Վարդանը յայտնի էր բարի և հեզ բնաւորութեամբ, ջերմեռանդ ու անկեղծ բարեպաշտութեամբ։ Ահա հէնց այդ պատճառով մանուկ Մեսրոպը դեռ մատաղ հասակում սնուում էր զուտ կրօնական գաղափարներով, կրօնական ուղղութեամբ։

Նա փոքր հասակում Մեծն Ներսէսի աշակերտը դարձաւ և նրա ղեկավարութեամբ աւելի զարկ տուեց իր կրօնական ձգտումներին։ Նա ընդունակ ու ժրաջան էր և ունէր ուսման մեծ ծարաւ։ Բայց այդ ծարաւին յագուրդ տալու համար հարկաւոր էր օտար լեզուներ սովորել, օտար գրականութիւնից նիւթեր քաղել, որովհետև հայերը չունէին իրանց սեփական գիրն ու հարազատ գրականութիւնը։

Մեսրոպը սովորեց յունարէն, ասորերէն և պարսկերէն և ապա սկսեց ուսումնասիրել գրականութիւնը։ Նա իր բնաւորութեան ու ընդունակութիւնների շնորհիւ Մեծն Ներսէսի սիրելին դարձաւ և մինչև իր մեծանուն ուսուցչի մահը կատարում էր նրա քարտուղարի պաշտօնը։ Մեսրոպն էր, որ Մեծն Ներսէսի վերջին րոպէին ներկայ լինելով, նրա մարգարէական գուշակութիւններն արձանագրեց։

Իր ուսուցչի մահից յետոյ Մեսրոպը գնաց արքունիք և մտաւ զինուորական ծառայութեան։ Այստեղ էլ նա գրաւեց սէր և ուշադրութիւն թէ զինուորների և թէ մեծամեծների կողմից, որովհետև պարտաճանաչ էր և չունէր ոչ հպարտութիւն և ոչ էլ գոռոզութիւն։ Զինուորական ծառայութեան հետ միասին նա վարում էր նաև գիւանադպրի պաշտօն։

Տարիներն անցնում էին միմեանց յետեւից։ Մեսրոպի բաղդի անիւը շարժւում էր առաջ ու առաջ, բայց նա գոհ չէր իր վիճակից։ Նրա հոգին ու սիրտը այլ բան էին որոնում, դէպի այլ ասպարէզ էին ձգտում։

Թէև ամբողջ արքունիքում նա միայն սէր և համակրանք էր վայելում, թէև նրա շուրջը նորաբաց վարդի նման փայլում էր շռայլ ու փարթամ կեանքը, թէև նրա համար պատրաստ էին բարձր պաշտօնները, գանձ ու պարգևները, բայց այնուամենայնիւ վեհ ձգտումները տարան իրանց յաղթանակը և նիւթապաշտութեան մթնոլորտից դուրս մղեցին գաղափարական Մեսրոպին։

Նա թողեց փափուկ ու զուարճալի կեանքը, դարձաւ հոգևորական և սկսեց ճգնաւորական կեանք վարել։ Գողթան գաւառի վանքերից մէկն էր Մեսրոպի բնակավայրը։ Սակայն այստեղ էլ բաւարարութիւն չէին գտնում նրա լայն միտքը, վսեմ ձգտումները...

Այդ երիտասարդ հոգևորականը յաճախ թողնում էր վանքն ու միաբանութիւնը, ընկնուր էր սար ու ձոր, դաշտ ու անապատ և այդտեղ, այդ խորհրդաւոր միայնակութեան մէջ անձնատուր լինում իր մտածմունքներին ու զբաղմունքներին։

Այդպիսի դրութեան մէջ նա մոռանում էր մարմնական պահանջներն ու յարմարութիւնները և բաւականանում էր միայն բանջարեղէն ուտելով, իսկ շատ անգամ բացօդեայ գետնի վրայ էր պառկում։ Նա ճգնաւոր էր բառիս բուն նշանակութեամբ։

III

Սակայն Մեսրոպը այն տեսակ ճգնաւորներից չէր, որ գիտեն միայն իրանց անձը զրկել, միայն իրանց եսով բաւականանալ։ Նա ունէր հասարակական ձգտում, եռանդ ու տոկունութիւն. ունէր գործելու ցանկութիւն, ուստի և չէր կարող անգործ մնալ, չէր կարող իր ճգնաւորական կեանքով բաւականանալ։ Նրան հարկաւոր էր կենդանի գործունէութիւն, իսկ դրա համար հողն արդէն պատրաստ էր և ասպարէզը լայն։

Ժողովուրդը խարխափում էր տգիտութեան խաւարի մէջ. նա դաւանում էր քրիստոնէական կրօնը, բայց չէր ըմբռնում նրա էութիւնը, չէր հասկանում նրա օրէնքները քարոզող գրքերն ու ժամասացութիւնը։ Արքունիքում բուն էին դրել անվերջ վէճն ու երկպառակութիւնը։ Անմիաբան նախարարները միմեանց դէմ զրպարտութիւններ էին անում, դարաններ էին լարում։ Չկար բուն

Հոնիսեանի Դպրոց
Էջեղ. Ծխակ. (orhnrdag)

ժողովրդի կարիքներին բաւականութիւն տուող, չկար նրա մտաւոր ու կրօնական առաջադիմութեան մասին մտածող։ Հետզհետէ աւելանում էին աղանդներն ու սնոտիապաշտութիւնը։

Ահա այդպիսի պայմաններ էին տիրում Մեսրոպի շուրջը, այդպիսի հանգամանքներում նա սկսեց իր գործունէութիւնը։

Հայաստանի զանազան կողմերից աշակերտներ հաւաքուեցին Մեսրոպի մօտ և նա սկսեց մեծ եռանդով պատրաստել նրանց քարոզչական գործունէութեան համար։ Երբ այդ նախապատրաստութիւնը վերջացած էր, երբ հաւաքուած աշակերտները բաւականաչափ մտաւոր զէնք էին ձեռք բերել, Մեսրոպը եկաւ Սահակ Պարթևի մօտ և ստացաւ նրա կաթուղիկոսական թոյլտուութիւնը՝ Հայոց աշխարհի զանազան կողմերում թափառելու և ամենուրեք ճշմարիտ քրիստոնէութիւն, աւետարանական սէր և եղբայրութիւն քարոզելու համար...

Նա իր գործունէութիւնը սկսեց (396 թ.) Գողթան գաւառից, որտեղ դեռ Տրդատ թագաւորի ժամանակուանից հեթանոսական մի աղանդ կար։ Այդ աղանդը աւելի յայտնի էր դարձել և աւելի շատ հետևողներ էր գրաւել Արշակունեաց թագաւորութեան տկարանալու ժամանակ։

Մեսրոպին և նրա աշակերտներին սիրով ընդունեց Շաբիթ իշխանը, որի օգնութեամբ եռանդուն քարոզիչներին աջողուեց ճշմարիտ ճանապարհի վրա դնել մոլորուած աղանդաւորներին։

Քարոզիչները Գողթանից դիմեցին դէպի Սիւ-

նեաց աշխարհը և այստեղ էլ Վաղինակ իշխանի օգնութեամբ առաջ տարան իրանց արդիւնաւէտ գործունէութիւնը։ Սակայն քարոզչական ասպարէզն էլ նեղ էր թւում Մեսրոպի համար։ Նա ուզում էր Հայաստանի մտաւոր խաւարը փարատելու համար մի ուրիշ փրկարար միջոց գտնել...

IV

Իսկապէս քրիստոնէութիւնն իր թարմ գաղափարներով լուսաւորութեան դուռ էր բաց արել հայերի համար։ Գրիգոր Լուսաւորչի աշխատութեամբ բացուել էին առաջին հայկական դպրոցները, բայց դժբաղդաբար դրանք ազգային կրթութեան համար չէին և չէին էլ կարող լինել, նախ այն պատճառով, որ նրանց մէջ ուսումն աւանդւում էր օտար լեզուներով—(ասորերէն և յունարէն)-և երկրորդ՝ նրանց գլխաւոր նպատակն էր Աւետարանի քարոզիչներ և եկեղեցական պաշտօնեաներ պատրաստել։

Բացի դրանից կար մի ուրիշ և աւելի մեծ արգելք՝ հայոց լեզուն չունէր սեփական տառեր։ Ծամասացութիւնը կատարւում էր օտար լեզուներով, որ մատչելի չէին հասարակ ժողովրդին։ Քրիստոնէութեան բուն ոգին ժողովրդի բոլոր խաւերի մէջ տարածելու համար անհրաժեշտ էր ունենալ Սուրբ գրքերի հայերէն թարգմանութիւնը, անհրաժեշտ էր ստեղծել մայրենի գրականութիւն։ Սակայն չկար այդ մեծ գործի բանալին, չկար հայկական այբուբէն։

Իր քարոզչութեան ժամանակ Մեսրոպը յաճախ ստիպուած էր լինում Ս. գիրքը կարդալ ասորերէն և ապա թարգմանել ու բացատրել հայերէն։ Նա հանդիպում էր մեծ դժուարութիւնների։ Նրա ծանր չարչարանքներն ու թափած ջան ու ճիգը չափազանց աննշան արդիւնք էին տալիս։

Ահա այդ հանգամանքն էր, որ ներշնչեց Մեսրոպին հայ լեզուի տառերը գտնելու գեղեցիկ միտքը։ Երկար մտածելուց յետոյ նա դիմեց Սահակ Պարթևին, յայտնեց իր ցանկութիւնը և հարցրեց նրա խորհուրդը։ Հայրապետը մեծ համակրանքով վերաբերուեց դէպի այդ օգտակար ձեռնարկութիւնը և խոստացաւ իր մշտական աջակցութիւնը։

Մի քանի անաջող փորձեր կատարելուց յետոյ Սահակ և Մեսրոպ վճռեցին հաւաքական ոյժերով ու խորհրդակցութեամբ գլուխ բերել այդ օգտակար գործը։

402 թուականին Վաղարշապատ քաղաքում Սահակ Պարթևի հրաւէրով գումարուեց մի մեծ ժողով, որի նպատակն էր ի միջի այլոց՝ հայկական նշանագրեր հնարել։ Այդ ժամանակ Ասորիքից վերադարձաւ Վռամշապուհ թագաւորը, որը յայտնեց, թէ իր այնտեղ եղած ժամանակ Հաբէլ քահանայից լսել է, որ Դանիէլ անունով մի ասորի եպիսկոպոս հայկական լեզուի համար առանձին նշանագրեր է յարմարեցրել։

Անսպասելի լուրը ընդհանուր ուրախութիւն պատճառեց։ Ժողովականները խնդրեցին թագաւորից՝ հոգ տանել այդ մասին և օր առաջ բերել տալ

յիշեալ նշանագրերը։

Անմիջապէս մարդ ուղարկեցին Դանիէլ եպիսկոպոսի մօտ և բերել տուին նշանագրերը, որոնք Դանիէլեան անունն ստացան։ Սահակ և Մեսրոպ իսկոյն աշակերտներ հաւաքեցին և սկսեցին այդ տառերով նրանց գրագիտութիւն սովորեցնել։

Երկու ամբողջ տարիներ անցան միմեանց յետևից, բայց փորձերն ապարդիւն մնացին։

Նշանագրերը բաւական չէին մեր լեզուի հնչիւնները ճշտութեամբ արտայայտելու։ Պակաս էին եօթը ձայնաւորները և եօթը բաղաձայն գրերը, որոնք հայերէնի յատուկ հնչիւններին էին վերաբերում։

Սակայն առաջին փորձի անաջողութիւնը չի վհատեցնում Մեսրոպին։ Նա իր աշակերտներից մի քանիսի հետ դիմում է ուղղակի Միջագետք՝ Դանիէլ եպիսկոպոսի մօտ, որպէսզի նրանից աւելի հիմնաւոր, աւելի ճիշտ կերպով տեղեկանայ այդ նշանագրերի կազմութեան մասին։

Դժբաղդաբար այդ տեսակցութիւնը ոչ մի օգուտ չի տալիս։ Այդ տեղից Մեսրոպը գնում է Եդեսիա՝ Պղատոն անունով մի հեթանոս ճարտասանի մօտ։ Այստեղ էլնա գտնում է սիրալիր ընդունելութիւն, բայց ոչ մի օգուտ իր ձեռնարկութեան համար։ Այդ ճարտասանը վերջ ի վերջոյ խոստովանում է իր անզօրութիւնը և յայտնումէ Մեսրոպին, թէ կայ մի ուրիշ աւելի հմուտ մարդ, որը Եդեսիայի դիւանից շատ գրքեր հետը վերցնելով գնաց և քրիստոնէութիւն ընդունեց... «Պտրելով գտիր նրան, ասումէ նա, որ քո փափագը կատարէ»։

Սակայն այդ հմուտ գիտնականին գտնելն անհնարին էր, որովհետև նա արդէն մեռած էր։ Երկար դեգերումից յետոյ անվհատ Մեսրոպը գալիս — հասնում է մինչև Սամոս կղզին և խորհուրդ է հարցնում Հռոփանոս գիտնականից, որը շատ լաւ ուսումնասիրել էր յունական լեզուն ու ամբողջ գրականութիւնը։ Այստեղ էլ նա իր սպասած օգնութիւնը չի գտնում և միանգամայն ընդմիշտ դադարում է օտարների վրա յոյս դնելուց։

Մեսրոպը իր հոգով ու սրտով, իր ամբողջ էութեամբ նուիրուած էր հայկական նշանագրեր գտնելու նպատակին։ Բազմաթիւ անաջողութիւններից յետոյ նա այժ տուեց իր սեփական մտքին ու երևակայութեանը։ Գիշեր—ցերեկ նա մտածում էր միայն այդ գիւտի մասին. ջերմեռանդ սրտով աղօթում էր, անդադար փորձեր էր անում, այնպէս որ նրա աչքերը միշտ և ամեն տեղ միայն հայկական նշանագրեր էին որոնում։ Այդ լարուած դրութիւնը շարունակուեց, մինչև որ «նրա սրտի գործարանում Ս. Հոգին ցոյց տուեց աջ ձեռի մի թաթ, որ գրում էր քարի վրա, ինչպէս ձեան վրայ...» Գրուածը հայկական նշանագրերն էին—ա, ե, է, ը, ի, ո, ւ, որ Ս. Մեսրոպ լրացրեց և դասաւորեց Հռոփանոսի աջակցութեամբ։ Այդ բանը պատահեց 406 թ. Նոյեմբերի 26-ին և այդ օրուանից էլ հաշուում է հայկական տառերի գիւտը։

Նորագիւտ տառերը կոչուեցան «Մեսրոպեան»

կամ „երկաթագրեր“։

Իր անդուլ ջանքերի այդպիսի բարեյաջող արդիւնքը տեսնելով, Ս. Մեսրոպը աւելի ոգևորուեց և աւելի մեծ եռանդով շարունակեց իր սկսած գործը։ Նա իսկոյն սկսեց թարգմանել Սողոմոնի առակները և Նոր Կտակարանը, որ այնքան կարևոր էին հայ աշակերտների համար։ Իսկ երբ անցաւ ցրտաշունչ ձմեռը, երբ բացուեցին յարմարաւոր ճանապարհները, նա շտապեց դէպի հայրենի երկիրը, որպէսզի այնտեղ իր աշակերտների ու գաղափարակիցների հետ ձեռք ձեռքի տուած շարունակէ պտղաբեր գործունէութիւնը, որպէսզի ամենքին էլ ուրախացնէ իր նոր գիւտով։

Եւ իսկապէս Մեսրոպեան տառերի գիւտը մի նոր դարագլուխ էր հայկական տարեգրութեան մէջ, որովհետև նրանից սկիզբն առաւ ազգային կրթութիւնն ու ճոխ գրականութիւնը, նրանով հիմք ստացաւ նշանաւոր Ե դարը։

Այդ գիւտն էր, որ հայերին միջոց տուեց քաղաքական կեանքի անկումից յետոյ էլ գոյութիւն պահպանել իբրև մի առանձին ազգութիւն։ Եթէ, ասում է գերմանացի հեղինակ Նէյմանը, հայերը բոլոր այն փոթորիկների մէջ, որ Ե-րորդ դարից սկսած դղրդացրին Ասիան և մանաւանդ Հայաստանը, կարողացան իբրև մի անկախ քրիստոնեայ ազգ մնալ, պատճառը գլխաւորապէս ազգային լեզուի տառերի գիւտին պէտք է վերագրել, որովհետև նրա միջոցով կարելի եղաւ սեփական գրականութիւն ունենալ և մի առանձին հոգևոր կազմութիւն պահպանել։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
7/XI-1952
Ա. ՄՅԱՍ Ի ՅՈՆԻ ԱՆՎԱՆ

V

Տառերի գիւտի օրից անցել էին ամիսներ։ 407 թուականի գարնանային օրերից մէկն էր. արքայանիստ Վաղարշապատ քաղաքում տօնական մի մեծ շարժում կար։ Ժողովրդի խուռն բազմութիւն գիմում էր դէպի Ռահ գետը։ Այդտեղ էին Հայոց Վռամշապուհ թագաւորն ու Սահակ հայրապետը, Հայոց զօրականներն ու զօրավարները, իշխաններն ու նախարարները բազմաթիւ ժողովրդի և հոգևորականութեան հետ միասին։ Բոլորն էլ ուրախ էին, բոլորն էլ սրտատրոփ սպասում էին մի խորհրդաւոր րոպէի։

Ահա վերջապէս հասաւ այդ տենչալի րոպէն. ահա երևաց Հայոց մեծ վարդապետ և առաջին թարգմանիչ Մեսրոպ Մաշտոցը։ Լսւում են երգերի և ցնծութեան ձայները, նրա առաջ թափւում են դափնեայ և վարդի պսակները։

Հաւաքուած բազմութիւնը խորհրդաւոր լռութեամբ լսում է նշանաւոր գիւտի մանրամասնութիւնները, տեսնում է նշանագրերը, հայկական տառերով ու բառբառով գրուած թարգմանութիւնները և ուրախութեան բացականչութիւններով ու քաղցրահնչիւն երգերով դէպի քաղաք է առաջնորդում այն մարդուն, որը իր կամքի և տոկունութեան շնորհիւ կարողացել էր արգելքներն յաղթել և իր ծրագրած նպատակին հասնել, որը կրթութեան ու առաջադիմութեան մշտական բանալի էր բերել անքողջ հայ ժողովրդի համար։

1005/3110 3

Հայկական տառերի գիւտի անմիջական արդիւնքն եղան այն դպրոցները, որ Սահակ և Մեսրոպ հիմնեցին—(408 թ.)-Հայաստանի զանազան կողմերում։ Թագաւորի հրամանով հաւաքուեցին բազմաթիւ մանուկներ, որոնք սկսեցին իրանց մայրենի լեզուն հարազատ տառերով սովորել։ Բոլորն էլ, օտար լեզուների տանջանքներից ազատուելով, դիմեցին դէպի այդ դպրոցները, ինչպէս խաւարից դէպի լոյսը, ինչպէս գերութիւնից դէպի ազատութիւնը։

Այդ նորաբաց դպրոցների մէջ իր մեծ նշանակութեամբ առաջին տեղը բռնում էր Վաղարշապատի դպրոցը, որը մի տեսակ մայր ուսումնարան կամ ուսուցչանոց դարձաւ միւս դպրոցների համար։ Այստեղ կրթուեցին Սահակի և Մեսրոպի այն աշակերտները, որոնք տառերի գիւտի ժամանակ բաւական հասակ ունէին և կարող էին իրանց վարդապետներին գործակից լինել թէ դասաւանդութեան և թէ թարգմանութիւնների մէջ։ Դրանց շարքում էին գտնւում Յովսէփ Վայոց Ձորից, Ղևոնդ երէց Վանանդեցին, Եղնիկ Կողբացին, Կորիւն Սքանչելին և այլն։ Դրանք բոլորն էլ յայտնի են առաջին աշակերտներ կամ թարգմանիչներ անունով։

Սրանք իրանց ուսուցիչների ղեկավարութեամբ ցրուեցին Հայաստանի զանազան գաւառները, ժողովեցին ընդունակ մանուկներ և մատակարարեցին նրանց ժամանակակից կրթութիւնը։ Այս երկրորդ կարգի աշակերտների թւում էին՝ Մովսէս Խորենացին, Մամբրէն, Դաւիթ Անյաղթը, Ղազար Փարբեցին,

Եղիշէն և ուրիշ շատերը, որոնք յայտնի են կրտսեր թարգմանիչներ անունով։

Այդ ժամանակաշրջանում կրօնական ազդեցութիւնն այնքան զօրեղ, այնքան մեծ էր, որ բոլոր դպրոցներում տիրում էր զուտ կրօնական-աստուածաբանական ուղղութիւն։ Այդտեղ ամենագործածական դասագրքերն էին Ս. Հայրերի գրուածքներն ու Աստուածաշունչը։ Եւ դա շատ բնական էր։ Այդ դպրոցների գլխաւոր նպատակն էր քրիստոնէական սկզբունքներ տարածելը և ժողովրդի հոգևոր պիտոյքները հոգալը։ Նրանց սաները հոգևորական էին դառնում և իրանց գործունէութեամբ աւելի ուժեղացնում կրօնական ազդեցութիւնը։ Ահա այդպիսով այդ նորաբողբոջ դաստիարակութեան ու գրականութեան մէջ տիրում էր զուտ կրօնական ոգի..

V

Մեծ գիւտի հռչակը տարածւում է ոչ միայն Հայաստանում, այլ և հեռաւոր երկրներում։ Վրացիներն ու աղուանները դիմում են Մեսրոպին և նրանից խնդրում, որ իրանց համար էլ յատուկ նշանագրեր հնարէ։

Անխոնջ Մեսրոպը սիրալիր կերպով յանձնառու է լինում նրանց ցանկութիւնն իրագործել։ Նա վերցնում է իր հետ Զաղայ անունով մի թարգման, իր աշակերտներից մի քանիսին և անմիջապէս ճանապարհ է ընկնում դէպի Վրաստան։ Այստեղ նա ամենից առաջ ուսումնասիրում է վրաց լեզուի հնչիւնները և ապա յօրինում է „խուցուրի“

կոչուած եկեղեցական այբուբէնը, որ իր ձևով շատ նման է հայկականին։ Այդ այբուբէնն իբրև պատմական փաստ մնացել է միայն եկեղեցական գրքերում, իսկ այժմ վրացիները գործ են ածում „մկէդրուլի“ տառերը։

Վրացիների տառերի գիւտը պատահեց 410 թ., Բակուր թագաւորի և Մովսէս եպիսկոպոսի օրերում։ Դրանց աջակցութեամբ Մեսրոպ բաց արեց բազմաթիւ դպրոցներ, ժողովեց ուսումնասէր ու ընդունակ մանուկներ և սրանց համար ուսուցիչ թողնելով իր երկու աշակերտներին՝ Խորենացի Տիրայրին և Տարօնեցի Մուշէին, ինքը վերադարձաւ Հայրենիք...

Մեսրոպ աղուանների խնդիրն էլ անուշադիր չթողեց։ 423 թ. նա գնաց Աղուանից աշխարհը, իրան յատուկ 'ջանասիրութեամբ ուսումնասիրեց այդ նոր լեզուն, որպէսզի նրա համար էլ տառեր յօրինէ։ Նրան աջակից էին տեղական իշխանութիւնն ու հոգևորականութիւնը, ուստի և գործն աւելի հեշտացաւ։ Մեսրոպ, իրան օգնական ունենալով Բենիամին անունով շնորհալի թարգմանին, հնարեց նոր նշանագրեր այդ կոկորդային, կոշտ, բիրտ և անհարթ լեզուի համար։

Կարճ միջոցում այստեղ էլ բացուեցին դպրոցներ, այստեղ էլ հաւաքուեցին բազմաթիւ մանուկներ, որոնք սկսեցին սովորել մայրենի լեզուն նորահնար տառերով։ Մեսրոպը աղուանների դաստիարակութեան գործը յանձնեց իր երեք աշակերտներին՝ Ենովքին, Դանանին և Յովնաթանին, իսկ

ինքը նորից վերադարձաւ Հայաստան—Սահակ Պարթևի մօտ, որն այդ ժամանակ զբաղուած էր թարգմանութեամբ։

VII

Մեսրոպի գլխաւոր ծառայութիւններից մէկն էլ եկեղեցական գրքերի թարգմանութիւնն է համարւում։ Նա մի կողմից քարոզում էր, իսկ միւս կողմից դպրոցներ էր հաստատում, այդ միևնոյն ժամանակ յունարէնից ու ասորերէնից թարգմանելով եկեղեցական գրքերը։

Այդպիսով նա սկիզբ դրեց գրական այն մեծ շարժմանը, որ այնպիսի եռանդով շարունակեցին նրա աշակերտները։ Այս գործունէութեան ամենամեծ արդիւնքն եղաւ Ս. Գրքի թարգմանութիւնը, որ նոյն իսկ օտարների վկայութեամբ համարւում է «թագուհի բոլոր թարգմանութիւնների»։

Իսկապէս Ս. Գիրքը երկու անգամ թարգմանուեց հայերէն. առաջին անգամին (411) ասորական օրինակից թարգմանուեցին այն հատուածները, որոնք անհրաժեշտ էին եկեղեցական արարողութիւնների համար, իսկ երկրորդ անգամին (436թ.) յունական «Եօթանասնից» կոչուած ընտիր օրինակի վրայ դրանք սրբագրուեցին և մնացած մասերն էլ հայերէնի վերածուեցին։

Սակայն այդ ամբողջ գործը Մեսրոպի աշխատութեան արդիւնքը չէր. մասնակցում էին նաև Սահակ Պարթև ու առաջին աշակերտներից մի

քանիսը։ Մեսրոպի գրչին պատկանում է Առակաց գրքի և Նոր Կտակարանի թարգմանութիւնը։ Բացի դրանից նա կարգի դրեց ազգային եկեղեցական ծիսարանը, որը նրա անունով կոչւում է „Մաշտոց։“ Դրա մէջ եղած աղօթքների մեծ մասը ինքը—Մեսրոպն է թարգմանել կամ շարադրել։ Այդ ամբողջ գիրքը մի գեղեցիկ երկասիրութիւն է, որի մէջ հաւասար չափով փայլում են կազմողի աստուածապաշտ եռանդը, բնատուր հանճարն ու մաքուր լեզուն։

Նա յօրինել է նաև „Մեծ պահոց“ շարականները և ուրիշ սրտաշարժ ու եռանդուն աղօթքներ, ճառեր և խրատական նամակներ, ինչպէս վկայում է Կորիւն պատմագիրը, թէ «բազում թուղթս խրատագիրս և զգացուցիչս ընդ ամենայն գաւառս առաքէր»։

Այդ ժամանակաշրջանի բոլոր երկասիրութիւնները և մանաւանդ Ս. Գրքի հայկական թարգմանութիւնը բացի իրանց կրօնական նշանակութիւնից ունին նաև մեծ նշանակութիւն հայոց լեզուի զարգացման համար։

Յայտնի է, որ հայոց լեզուն դեռ շատ հին ժամանակներից բաժանուած էր զանազան գաւառաբառբառների։ Հեթանոսութեան վերջին դարերում Արարատեան նահանգի բառբառը, հետզհետէ կոկուելով և մշակուելով, աւելի իշխող դիրք ստացաւ։ Նա գործ էր ածւում թէ արքունիքում և թէ նախարարների տներում, թէ քաղաքական և թէ կրօնական դիւաններում։ Դ-րորդ դարի սկզբում այդ լեզուն արդէն բաւական կանոնաւորուած էր և զանազան գաղափարներ արտայայտելու ընդունակ...

Բայց տառերի գիւտից յետոյ նա մտաւ իր պատմութեան նոր շրջանի մէջ և աւելի զարգանալ սկսեց։ Ս. Գրքի և թարգմանական ուրիշ գրուածքների մէջ, հեղինակների ու թարգմանիչների կիրթ ճաշակի և մեծ հմտութեան շնորհիւ նա կոկուեց, հարստացաւ ու ճոխացաւ։

Թէ այդ հարցում և թէ առհասարակ հայերի դաստիարակութեան ու քաղաքակրթութեան գործում շատ մեծ դեր է խաղացել Յունաստանը։ Դեռ Դ-րորդ դարում շատ հայ երիտասարդներ սկսել էին յաճախել այդ երկիրը, որպէսզի գիտութեան աղբիւրից յագեցնեն իրանց ծարաւը։

Ճիշտ է, Հայաստանում էլ բացւում էին դպրոցներ, արմատ էր գցում նորաբողբոջ գրականութիւնը, բայց նրանք կանգնած չէին ցանկալի բարձրութեան վրայ և չէին կարող բաւականութիւն տալ բոլոր պահանջներին։ Ահա այդ պատճառով Ս. Սահակ և Մեսրոպ իրանց աշակերտների միջից ընտրեցին ամենաընդունակներին և ուղարկեցին Աթէնք, Աղէքսանդրիա և Կ. Պոլիս, որպէսզի քաղաքակրթութեան այդ կենտրոններում նրանք սովորեն հռետորական, փիլիսոփայական և պատմական գիտութիւնները և ապա գիտութեան լոյսը իրանց հայրենիքում ծաւալեն։

Դրանք եօթը երկար ու ձիգ տարիներ մնացին օտարութեան մէջ և իրանց ուսումը վերջացնելուց յետոյ հետները վերցրին բազմաթիւ յունա-

րէն գրքեր, իրանց կատարած պիտանի թարգմանութիւնները և վերադարձան Հայրենիք, որպէսզի այստեղ իրանց մեծ ուսուցիչների հետ ձեռք ձեռքի տուած շարունակեն գրականական-քարոզչական գործունէութիւնը...

VIII

Տառերը գտնելուց յետոյ էլ Մեսրոպը յարմար դէպքում շարունակում էր իր քարոզչական գործունէութիւնը։ Նա այդ նպատակով այցելեց Սպեր, Դերջան գաւառները և այդ տեղերում իրա աշակերտներից թողնելով, անցաւ Գողթան գաւառը։ Այստեղ Շաբիթ իշխանի որդի Գտի օգնութեամբ անհետացրեց հեթանոսական աղանդի մնացորդները, ապա դիմեց դէպի Տաշիր գաւառը և հարևան Սիւնեաց աշխարհը։ Ամեն տեղ էլ նա իրան յատուկ եռանդով քարոզում էր սէր դէպի եղբայրութիւն ու համերաշխութիւն, դէպի ազգն ու եկեղեցին...

Ինչպէս յայտնի է, այդ ժամանակներում Հայաստանի մի մասը Յունաստանի իշխանութեան տակ էր գտնւում։ Բայց քրտնաջան Մեսրոպը աշխատում էր այստեղ էլ տարածել իր քարոզած վեհ գաղափարները, բարձր սկզբունքները, ուզում էր այստեղ էլ դպրոցներ հիմնել, հայկական գրագիտութիւն տարածել։ Սակայն երկրի կառավարիչներն արգելք էին դառնում նրա գործունէութեանը։ Ահա այդ պատճառով Սահակ Պարթևը, մի քանի

նախարարների հետ խորհրդակցելով, որոշում է յատուկ պատգամաւորներ ուղարկել Կ. Պոլիս—Կայսր Թէոդոս փոքրի մօտ և նրանից թոյլաւութիւն խնդրել։

Այդ պատգամաւորութիւնն էլ վիճակւում է Մեսրոպին։ 420 թ. նա վերցնում է իր աշակերտներից մի քանիսին և Վարդան Մամիկոնեանի հետ ճանապարհ է ընկնում դէպի Կ. Պոլիս։ Ամեն տեղ նրան ընդունում են պատւով ու մեծարանքով, ամեն տեղ աշխատում են ծանօթանալ այն մարդու հետ, որի մեծ անունը բերնից-բերան էր պըտտւում, որի հռչակը երկրից-երկիր էր հասել։

Թէ կայսրը, թէ պատրիարքը և թէ Անատոլիոս զօրավարը սիրալիր կերպով լսում են Մեսրոպի պատմութիւնը կատարուած դէպքերի մասին, կարդում են Սահակ Պարթևի ուղարկած գրութիւնները և պատշաճաւոր հրամաններով իրաւունք են տալիս հայ քարոզիչներին՝ ազատ համարձակ շրջագայել ամեն կողմ և տարածել կրթութիւն ու մաքուր գաղափարներ։

Սակայն այդ դեռ բոլորը չէ։ Նրանք ուրիշ փաստերով էլ ցոյց են տալիս իրանց յարգանքն ու մեծարանքը դէպի հայոց մեծ վարդապետ Մեսրոպը։ Կայսրը նրան տալիս է Ակումիտ տիտղոսը, որ նշանակում է „անդադար աշխատող“, իսկ պատրիարքը անուանում է Էկլեզիատիկոս, որ եկեղեցական մի պատուաւոր տիտղոս է և նշանակում է „բարձունապետ։“ Յոյներն այդ տիտղոսը շնորհում էին սովորաբար այն հոգևորականներին, որոնք

մեծ հմտութիւն էին ցոյց տալիս եկեղեցական գիտութիւնների մէջ։

Այդպիսի աջողութեամբ վերադառնալուց յետոյ Մեսրոպն իր աշակերտների օգնութեամբ դպրոցներ հիմնեց, ամեն տեղ վերահսկիչներ նշանակեց և առհասարակ մեծ զարկ տուեց յունական Հայաստանում ապրող հայերի կրթական—եկեղեցական գործին։

IX

Սահակ Պարթևի մահից (440 թ.) յետոյ Մեսրոպ Մաշտոցը կաթուղիկոսական գահը բարձրացաւ։ Բայց նրան վիճակուած չէր երկար ժամանակ հայրապետութիւն անել։ Մեծ հասակն ու անդադրում գործունէութիւնն արդէն քայքայել էին առողջութիւնը։ Մի քանի ամիս յետոյ նա ևս վախճանուեց, հայ ժողովրդին մեծ վիշտ ու սուգ պատճառելով։

Ս. Մեսրոպի կորուստը ժողովրդի համար զգալի էր մանաւանդ այդ ժամանակ, երբ Հայաստանը նման էր անղեկ նաւին, որ ընկած է ալեկոծ ծովը և առաջ է շարժւում առանց իմանալու թէ ո՞ւր և ինչպէս։ Այդ ժամանակաշրջանի մասին է, որ յայտնի պատմագիր Խորենացին գրում է իր նշանաւոր ողբը, դրա մասին է, որ այդ ողբի թարգմանը—բանաստեղծը* երգում է.

Ողբում եմ քեզ, Հայոց աշխարհ,
Ողբում եմ քեզ ես վշտահար,

* Ուշխան Բագրատունի։

Հիւսիսական երկիրներից
Դու վեհագոյն և բարելից։
Վերցաւ քեզնից մեծ թագաւոր,
Դրացիներին միշտ ահաւոր.
Վերցաւ քեզնից մեծ քահանան—
Ուսուցիչ և խորհրդական։
Վրդովուեցաւ խաղաղութիւն,
Արմատացաւ անկարգութիւն,
Դրդուեցաւ ճշմարիտ փառք
Տգիտութեամբ չար և անարգ։
Ողբում եմ քեզ ցաւով սրտի,
Հայաստանի եկեղեցի,
Զրկուած կարգից, զարդ քարոզից,
Եւ քաջ հովուից ու հովուակցից։
Քո բանաւոր հօտ չեմ տեսնում
Հովուած, խնամուած դալար վայրում,
Ոչ զովարար ջրերի մօտ,
Ուր շունչ հանգիստ կառնէ միշտ հօտ.
Ոչ փարախում ի մի խմբուած,
Պատռող գայլից զգուշացած.
Այլ գահավէժ, անօգնական,
Անապատումն է ցիրուցան։
Ո՞հ թէ լինէր ոք տրտմակից,
Ինձ հետ ողբար Հայոց աշխարհ,
Եւ մեր սուգի դառն կսկիծ
Թող հնչեցնէր տխուր քնար։
Զարթի՛ր, զարթի՛ր, Երեմիաս,
Անտէր Հայերն թշուառացան,
Արժանի են, որ դու ողբաս

Նոցա ներկան ու ապագան։
Դու գուշակիր, թէ ինչ տգէտ
Զար հովիւներ պիտի յառնեն,
Առաջնորդներ կոյր և անպէտ
Մեր ճանապարհ մոլորեցնեն . . .

Պարզ է ուրեմն, որ այդպիսի հանգամանքներում մեծ ցաւ էր Մեսրոպի նման անձնուէր հովուից զրկուելը։ Սակայն կորուստն անդառնալի էր. մնում էր միայն նրա յիշատակն յարգելով մխիթարուել։

Ժողովրդի մէջ ահագին վէճ ու տարաձայնութիւն բարձրացաւ այն մասին, թէ որտեղ պէտք է թաղել մեծ վարդապետի մարմինը։ Վաղարշապատցիներն ուզում էին Էջմիածնի հանգստարանում թաղել, ազգականներն ու դաւառակիցները պնդում էին, թէ պէտք է տեղափոխել հայրենի երկրի—Տարօնի ծոցը։ Աշակերտներից շատերն էլ առաջարկում էին Գողթան գաւառի Մասրեվանքում թաղել։

Բայց բոլորին յաղթեց հայոց աշխարհի մեծ հազարապետ Վահան Ամատունին։ Նա վերցրեց Մեսրոպի մարմինը և նախարարների, հոգևորականների ու ժողովրդի խուռն բազմութեան ուղեկցութեամբ մեծ հանդիսով տարաւ իր Օշական գիւղը և թաղեց տեղական եկեղեցու սեղանի ներքևը։ Մի երկու տարի յետոյ սրբատաշ քարից սքանչելի խորան կանգնեցրեց գերեզմանի վրայ և սեղանը թանկագին զարդերով զարդարեց։

Անցան տարիներ։ Հռչակաւոր տաճարը կորցրեց իր նախկին փայլն ու շքեղութիւնը։ 1635 թ.

Փիլիպպոս կաթուղիկոսը նորոգել տուեց նրան։

Սակայն ժամանակը դարձեալ իր դերը կատարեց և քայքայում առաջացրեց։

Վերջապէս 1873—1880 թ. Գէորգ կաթուղիկոսի հրամանով և օշականցիների ու ուրիշ հայերի օժանդակութեամբ հռչակաւոր տաճարը հիմնական վերանորոգութեան ենթարկուեց և նորից վայելուչ տեսք ընդունեց։

Էջմիածնից մի քանի վերստ հեռու, գեղեցիկ ծառաստանների մէջ ընկած է Օշական գիւղն իր հոյակապ տաճարով, որի ծոցում հանգչում է քրիստոնեական Մեսրոպի մարմինը։

Գեղեցիկ է այդ գիւղը ծառ ու ծաղիկներով։ Գրաւիչ է այդ տաճարը իր պատմական յիշատակարանով, որ կարծես ամեն մի հայի կանչում է երախտագիտութեան համբոյր տալու այն մարդու շիրմին, որ գիտէր վեհ գաղափարներով ապրել ու գործել, որ գիտէր միշտ և ամեն տեղ քարոզել ու սովորեցնել...

X

Մեռաւ Մեսրոպ Մաշտոցը, բայց յարատև մնաց նրա յիշատակը, կենդանի մնաց նրա սկսած մեծ գործը։ Նրա ցանած սերմերը բերին առատ պտուղներ, պատրաստած աշակերտները ցոյց տուին եռանդուն գործունէութիւն։ Այդպիսով հայկական աղքատիկ գրականութիւնը հարստանում էր նորանոր գրուածքներով՝ թէ թարգմանական և թէ ինք-

նուրոյն։

Դժբաղդաբար այդ նորածիլ գրականութիւնը միայն սահմանափակ շրջանի համար էր, միայն սակաւաթիւ ընտրեալների սեփականութիւնն էր կազմում։ Ժողովուրդը զուրկ էր նրանից, չէր վայելում նրա փրկարար ազդեցութիւնը։ Պատճառը հասկանալի է։ Այդ ժամանակ չկար մամուլ, չկար տպարան։ Բոլոր գրուածքները արտագրւում էին ձեռքով և չափազանց թանկ գնահատւում։

Վերջապէս վրայ հասաւ XV դարը, իր հետ բերելով Յովհան Գուտէնբերգի նշանաւոր գիւտը— տպագրութիւնը։ Այլ ևս հարկաւոր չէր ամիսներ ու տարիներ նստել մի որ և է գիրք արտագրելու համար։ Բաւական էր բնագիրը շարել համապատասխան տառերով, ապա տպագրել։ Այդպիսով կարելի էր կարճ միջոցում հարիւրաւոր ու հազարաւոր օրինակներ պատրաստել միևնոյն գրքից։ Հասկանալի է, որ այդ գիւտը չափազանց մեծ հարուած տուեց բոլոր ազգերի գրականութեանն ու մտաւոր առաջադիմութեանը։

Հայերն էլ այդ ազգերի շարքումն էին։ 1512 թ. Վենետիկում սկսուեց հայկական առաջին տպագրութիւնը։ Այդ և յաջորդ տարին միմեանց յետևից լոյս տեսան հինգ գրքեր՝ «Պարզատոմար», «Պատարագատետր», «Ուրբաթագիրք», «Տաղարան» և «Աղթարք»։

Դրանից յետոյ հայերը տպարաններ հիմնեցին նաև ուրիշ քաղաքներում։ Ահա այդպիսով հետզհետէ զարգացաւ հայկական տպագրութիւնը, առաջադիմեց հայկական գրականութիւնն ու մտաւոր շարժումը, որոնք հայերիս գոյութեան ամենահզօր պատուարը դարձան։

Այժմ մենք ունինք բազմաթիւ պարբերական հրատարակութիւններ ու գրքեր, ունինք բաւական հարուստ գրականութիւն ու մշակուած լեզու, բայց այդ բոլորի համար շատ բան ենք պարտական հայկական տառերը հնարող Մեսրոպ Մաշտոցին։

Թող ուրեմն միշտ անմոռաց մնայ նրա անունը ամեն մի հայի սրտում։ • •

Մեր աղբիւրները.

1. Կորիւն վարդապետ—«Պատմութիւն վարուց և մահուան սրբոյն Մեսրոպայ»։
2. Ղազար Փարպեցի—«Պատմութիւն Հայոց և Վահանայ Մամիկոնեանի»։
3. Մովսէս Խորենացի—«Պատմ. Հայոց»։
4. Ս. Պալասանեան—«Պատմ. Հայոց»
5. Ա. Մ. Գարսգաշեան—«Քննական պատմութիւն Հայոց» մասն դ.
6. Ն. Գ. Զարբանալեան—«Հայկական հին դպրութեան պատմութիւնը»։
7. Լէօ—«Հայկական տպագրութիւն»։
8. Ն. Յով. վ. Թորոս —«Ընտիր Հայկազունք»
9. Ա. Մելեան—«Հայոց մեծ վարդապետ Ս. Մեսրոպը»։
10. Աւգերեան—«Վարք Սրբոց»։

ՀՀ Ազգային գրադարան
NL0416714